Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2025-2026 ՈՒՍՏԱՐԻ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021801.01.6 «ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

«Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտության շրջանավարտները ստանում են արվեստի տեսության և պատմության բակալավրի որակավորում:

Ուսման տևողությունը չորս տարի է:

«Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտությամբ կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, գիտելիքներ արվեստի պատմությունից և տեսությունից:

Դիմորդը ընդունելության քննություն է հանձնում երկու մրցութային առարկայից.

1. «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր:
2. «Արվեստի տեսություն» (ԱՏ) գրավոր:

<u>1-ին քննություն</u>՝ «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր

Մասնագիտական առաջին քննությանը ներկայացվող պահանջներն են.

Պարզել դիմորդի ընդհանուր գիտելիքները արվեստի պատմությունից. նախնադարյան արվեստ, հին աշխարհի արվեստ (Հին Եգիպտոս, Հռոմ, Միջագետք, Հունաստան), հելլենիստական ժամանակաշրջանի արվեստ, միջնադար, վերածննդի արվեստ, նոր դարաշրջանի արվեստ, նորագույն շրջանի արվեստ:

<u>2-րդ քննություն</u>՝ «Արվեստի տեսություն» (ԱՏ) գրավոր

Մասնագիտական երկրորդ քննությունը նպատակ ունի պարզելու դիմորդի արվեստի տեսական գիտելիքների իմացությունը: Արվեստի տեսության վերաբերյալ գիտելիքները ստուգվում է հարցատոմսի հարցերին գրավոր պատասխանելու միջոցով, որոնք ընդգրկում են հարցեր արվեստի տեսակների, զարգացման հիմնական փուլերի, ժանրերի (դիմանկար, բնանկար, պատմական ժանր, դիցաբանական և աստվածաշնչյան ժանր,

նատյուրմորտ) և 19-20-րդ դարերում արվեստի զարգացման հիմնական ուղղությունների մասին:

Ինչպես արվեստի ընդհանուր պատմության, այնպես էլ տեսության վերաբերյալ հարցերը լուսաբանված են ներքոնշյալ գրականության մեջ.

1. Աղասյան Ա., Հակոբյան Հր., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Զանգակ-97, Երևան, 2009
2. Առաքելյան Բ., Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976
3. Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. 9-6-րդ դարերում, Երևան, 2006
4. Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975
5. Դավթյան Ս., դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1985
6. Երզնկյան Մ., Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան, 2003
7. Զաբյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության, Երևան, 1986
8. Մարտիկյան Ե., Հայ կերպարվեստի պատմություն, Երևան, գիրք Ա, 1971, գիրք Գ, 1983, գիրք Դ, 1987
9. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը 17-18-րդ դդ գեղանկարչություն, Երևան, 1974
10. Матье М. Э., Искусство Древнего Египта, Л-М, 1960
11. Белявский В.А., Вавилон легендарный и Вавилон исторический, М, 1971
12. История искусства зарубежных стран в 3-х томах, М., 1962-1964
13. Бернсон Бернард, Живописцы итальянского Возрождения, Б.С.Г.-Пресс, 2006

021801.01.6 «ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1-ին քննություն՝ «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր

Մասնագիտական առաջին քննությունը կազմակերպվում է բանավոր քննության ընթացակարգով:

Դիմորդի քննատոմսը պարունակում է ընդհանուր արվեստի պատմությանը վերաբերող չորս հարց՝ ըստ ներքոնշյալ գնահատման չափանիշների.

1. Պատկերացում արվեստի պատմության հիմնական փուլերի մասին, վերջիններիս բնութագրումն կարողություն 0-5 միավոր
2. Իմացություն հայ և համաշխարհային արվեստի նշանավոր ներկայացուցիչների 0-5 միավոր
3. Գիտելիքներ հայ միջնադարյան արվեստի մասին 0-5 միավոր
4. Գիտելիքներ արվեստի ստեղծագործությունների մասին 0-5 միավոր

Ընդամենը 20 միավոր

<u>2–րդ քննություն</u>՝ «Արվեստի տեսություն» (ԱՏ) գրավոր

Քննության ընթացքում ստուգվում է արվեստի տեսությանը վերաբերվող դիմորդի գիտելիքները:

Դիմորդները հրավիրվում են «Արվեստի տեսություն» գրավոր քննությանը: Տեսությանը վերաբերվող հարցերը ընտրվում են առարկայի ներքոնշյալ բաժիններից առանձնացված 4 հարցից կազմված հարցատոմսերում, որոնք գնահատվում են նշված միավորներով.

1. Արվեստի տեսակները 0-5 միավոր
2. Արվեստի զարգացման հիմնական փուլերը 0-5 միավոր
3. Կերպարվեստի ժանրերը, տեսակները 0-5 միավոր
4. 19-20 րդ դարերի արվեստի ուղղությունները 0-5 միավոր

Ընդամենը 20 միավոր

Տեսությանը վերաբերվող գրավոր քննության ժամանակ նախապես դիմորդներին բաժանվում են ծածկագրված թղթեր, որից հետո ծրարված հարցերից, վիճակահանությամբ, ըստ տարբերակների թվի, բացվում են մեկական ծրար և ըստ տարբերակների բաժանվում դիմորդներին: Գրավոր քննությանը հատկացվում է 2,5 աստղաբաշխական ժամ (150 րոպե):

Քննության ավարտից հետո գրավոր աշխատանքները ստուգվում են նույն օրը: Ստուգված աշխատանքների գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ:

021801.01.6 «ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1-ին քննություն - «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր: Քննությունը կազմակերպվում է բանավոր քննության ընթացակարգով:

2-րդ քննություն - «Արվեստի տեսություն» (ԱՏ) գրավոր:

Դիմորդները հրավիրվում են «Արվեստի տեսություն» գրավոր քննության: Քննասենյակում դիմորդներին բաժանվում են ծածկագրված թղթեր, որից հետո ծրարված հարցերից, վիճակահանությամբ, ըստ տարբերակների թվի, բացվում է մեկական ծրար և ըստ տարբերակների բաժանվում դիմորդներին: Գրավոր քննությանը հատկացվում է 2,5 աստղաբաշխական ժամ (150 րոպե):

Քննության ավարտից հետո աշխատանքները ստուգվում են նույն օրը:

Ստուգված աշխատանքների գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հարցաշար

1. Կերպարվեստը նախնադարյան Հայաստանում. ժայռապատկերներ, մեգալիթյան կառույցներ . Քարահունջ (Զորաց քարեր), վիշապներ:
2. Հին Եգիպտոսի արվեստի զարգացման փուլերը. Հին թագավորություն՝ մաստաբաներ, բուրգեր, սֆինքսներ:
3. Հին Եգիպտոսի Նոր թագավորության շրջան՝ Ամառնայի արվեստը. Նեֆերտիտիի դիմաքանդակը:
4. Միջագետքի երկրների արվեստը. տաճարները, պալատները, քանդակագործությունը. Շումեր, Աքքադ, Ասորեստան, Բաբելոն:
5. Արարատյան թագավորության (Ուրարտու), կերպարվեստը. Մետաղի գեղարվեստական մշակում, քանդակագործություն, որմնանկար:
6. Ուրարտական պալատաշինությունը, ամրոցները, քաղաքները. Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Էրեբունի:
7. Հունական արվեստի զարգացման փուլերը.Դասական փուլ. Ակրոպոլիսի համալիրը:
8. Հին Հունաստան. Դասական քանդակը բնորոշող հատկանիշները: Քանդակագործներ՝ Ֆիդիաս, Միրոն, Պոլիկլետոս (մ.թ.ա. 5-րդ դ.):
9. Հունական դասական թատրոնի ձևավորումն ու զարգացումը:
10. Հելլենիզմի շրջան. սահմանում, ճարտարապետություն, քանդակ, հիմնական կոթողները:
11. Հելլենիզմը Հայաստանում. Գառնիի հեթանոսական տաճարը, հարդարանքը (1-ին դար) , բաղնիքի խճանկարը (3-րդ դար):
12. Հին Հռոմի գլխավոր ճարտարապետական հուշարձանները. Պանթեոն, Կոլիզեյ, Ֆորումներ, Հաղթակամարներ:
13. Հռոմեական դիմաքանդակ. բնորոշ հատկանիշները:
14. Պարսկաստան (Իրան). Պալատական համալիրը Պերսեպոլիսում (մ.թ.ա. 6-րդ դար):
15. Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի. Բյուզանդիա. ճարտարապետություն, խճանկարներ, սրբապատկերներ. Սբ. Սոֆիայի տաճարը:
16. Արևմտյան Եվրոպայի միջնադարյան արվեստի փուլերը. ռոմանական, գոթական:

17. Գոթական արվեստի զարգացման փուլերը. Փարիզի Աստվածամոր տաճարը:
18. Ռուսական սրբապատկերների ճանաչված վարպետ՝ Անդրեյ Ռուբլյով. «Սբ. Երրորդություն» սրբապատկերը:
19. Քրիստոնեական արվեստի սկզբնավորումը Հայաստանում. եկեղեցաշինություն՝ Էջմիածնի Մայր տաճարը:
20. Հայ միջնադարյան պատմագրություն (5-րդ դար). Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ:
21. Խաչքարը որպես հայ կերպարվեստի յուրահատուկ տեսակ:
22. Միջնադարյան Հայաստանի վանական համալիրները. Հաղպատ, Գեղարդավանք, Տաթև:
23. Նորավանքի եկեղեցիների հարթաքանդակները:
24. Զարգացած միջնադարի ճարտարապետությունը Հայաստանում . Անի քաղաքը:
25. Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գեղարվեստական հարդարանքը. հարթաքանդակներ, որմնանկարներ:
26. Միջնադարյան հայ ճարտարապետները. Տրդատ, Մանուել, Մոմիկ:
27. Միջնադարյան առակագիրները Հայաստանում. Վարդան Այգեկցի, Մխիթար Գոշ (13-րդ դար):
28. Հայկական միջնադարյան գրքարվեստը. Ժողովրդական և Ազնվական ուղղություններ, մանրանկարչական դպրոցներ:
29. Կիլիկիայի մանրանկարչական դպրոցը. Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ:
30. Վերածննդի դարաշրջան. Իտալական վերածննդի փուլերը:
31. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Լեոնարդո դա Վինչի (1452-1519). «Խորհրդավոր ընթրիք» որմնանկարը:
32. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Միքելանջելլո Բուոնարոտտի (1475-1564). Դավթի արձանը:
33. Վաղ Վերածնունդ՝ Սանդրո Բոտիչելլի (1445-1510) «Վեներայի ծնունդը» աշխատանքը:
34. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Ռաֆայել Սանտի (1483-1520) . «Սիքստինյան Տիրամայրը» կտավը:
35. Հյուսիսային Եվրոպայի վերածնունդը. Ալբրեխտ Դյուրեր:

36. 17-րդ դարի եվրոպական արվեստի ընդհանուր բնութագիրը, ուղղությունները՝ Բարոկկո, Կլասիցիզմ, Ռեալիզմ, վարպետները:
37. 17-րդ դարի եվրոպական արվեստի նշանավոր վարպետ Պիտեր Պաուլ Ռուբենսի (1577-1640) արվեստը:
38. Ռեմբրանդ վան Ռեյնի ստեղծագործությունը (1606-1669). «Անառակ որդու վերադարձը» կտավը:
39. 19-րդ դար. Ռոմանտիզմը եվրոպական արվեստում՝ Էժեն Դելակրուա, Ֆրանսիսկո Գոյա:
40. Համաշխարհային ճանաչում գտած կոմպոզիտորները՝Մոցարտ, Բեթհովեն, Շոպեն:
41. Իմպրեսիոնիզմը Եվրոպայում. Կլոդ Մոնե, Օգյուստ Ռենուար, Էդգար Դեգա:
42. Օգյուստ Ռոդենի (1840-1917) «Մտածողը» քանդակը:
43. Պոստիմպրեսիոնիզմի խոշորագույն վարպետ՝ Վինսենտ վան Գոգ:
44. 20-րդ դարի նշանավոր նկարիչները. Պաբլո Պիկասսո, Սալվադոր Դալի:
45. Ամերիկահայ նկարիչ ՝Արշիլ Գորկի (1904-1948):
46. Ավանգարդ արվեստ. Կազիմիր Մալևիչ (1879-1935), Վասիլի Կանդինսկի (1866-1944), Մարկ Շագալ (1887-1985):
47. Սփյուռքահայ կերպարվեստ. Գառզու (Գառնիկ Զուլումյան), Ժանսեմ (Հովհաննես Սեմերջյան):
48. Հովնաթանյան նկարչական տոհմը:
49. Ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկի (1817-1900). «Իններորդ ալիք» կտավը:
50. Պատմանկարիչ Վարդգես Սուրենյանց (1860-1921):
51. Հայ կերպարվեստի նահապետ՝ Մարտիրոս Սարյան (1880-1972):
52. Սերգեյ Փարաջանով՝ ռեժիսոր և նկարիչ (1924-1990):
53. .Հայ մեծանուն երգահան՝ Կոմիտաս(1869-1935): Արամ Խաչատրյանի (1903-1978) բալետները:
54. Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» և «Վարդան Մամիկոնյան» ձիարձանները:
55. Ճարտարապետ՝Ալեքսանդր Թամանյան (1878-1936):
56. Երաժիշտ՝ Շառլ Ազնավուր (1924-2018):
57. 20-րդ դարի նշանավոր հայ քանդակագործները. Հակոբ Գյուրջյան, Արա Սարգսյան, Արա Հարությունյան:

58. 20-րդ դարի հայ բեմարվեստի վարպետները. Վահրամ Փափազյան, Պետրոս Ադամյան:
59. Ամերիկահայ գրող՝ Վիլյամ Սարոյան (1908-1981):
60. Նորագույն շրջանի հայ կերպարվեստի նշանավոր դեմքերը. Մինաս Ավետիսյան, Գրիգոր Խանջյան, Հակոբ Հակոբյան:
61. Հակոբ Կոջոյանի (1883-1959) գրքի գրաֆիկան:
62. Խորհրդային շրջանի հայ կինոմատոգրաֆիան:
63. Բնանկարչական ժանրի հիմնադիրը հայ կերպարվեստում՝ Գևորգ Բաշինջաղյան (1857-1925):
64. Նկարիչ Իլյա Ռեպին (1844-1930). «Իվան Ահեղը սպանում է իր որդուն» կտավը:
65. Մոդեռնը ռուսական արվեստում. Միխայիլ Վրուբել (11856-1910). «Նստած Դևը» կտավը:

Առաջարկվող գրականության ցանկ

1. Աղասյան Ա., Հակոբյան Հր., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Զանգակ-97, Երևան, 2009
2. Առաքելյան Բ., Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976
3. Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. 9-6-րդ դարերում, Երևան, 2006
4. Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975
5. Դավթյան Ս., դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1985
6. Երզնկյան Մ., Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան, 2003
7. Զաբյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության, Երևան, 1986
8. Մարտիկյան Ե., Հայ կերպարվեստի պատմություն, Երևան, գիրք Ա, 1971, գիրք Գ, 1983, գիրք Դ, 1987
9. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը 17-18-րդ դդ գեղանկարչություն, Երևան, 1974
10. Матье М. Э., Искусство Древнего Египта, Л-М, 1960
11. Белявский В.А., Вавилон легендарный и Вавилон исторический, М, 1971
12. История искусства зарубежных стран в 3-х томах, М., 1962-1964
13. Бернсон Бернард, Живописцы итальянского Возрождения, Б.С.Г.-Пресс, 2006